Մեր ընտրելու զորությունը

Տարբերակ Ա. ընտրելու մեր զորությունն ի՞նչ է ուսուցանում մեզ Աստծո մասին:

Կարդացեք 2 Նեփի 2.14, 16 հատվածը և գտեք, թե Լեքին ինչ էր ուսուցանում Աստծո և մեր կամքի ազատության մասին:

- Ի՞նչ եք սովորել:
- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ Աստված մեզ գործելու ինքնուրույնության զորություն է տալիս:
- Ի՞նչ զգացողություն է տալիս ձեզ այն, որ Երկնային Հայրը վստահում է ձեզ՝ կատարելու ձեր սեփական ընտրությունները:

Մտածեք մի օրինակ, որտեղ կամքի ազատությունն օգտագործել եք այնպես, որ ունեցել եք Երկնային Հորը գոհացնելու զգացողություն:

- Ըստ ձեզ՝ ինչո՞ւ է ձեր ընտրությունը գոհացրել Աստծուն:

Նաև գուցե օգտակար լինի ձեր կատարած բոլոր այն ընտրությունների մասին մտորելը, որոնք հնարավոր է՝ չեն գոհացրել Աստծուն, և ինչ եք սովորել դրանցից:

Տարբերակ Բ. Ի՞նչ է տվել մեզ Աստված, որպեսզի օգնի մեզ իմաստուն կերպով ընտրություն կատարել:

Կարդացեք 2 Նեփի 2.5, 13 և Մորոնի 7.16 հատվածները՝ փնտրելով հետևյալ ճշմարտությունները: Նկատի ունեցեք, որ «օրենքը» վերաբերում է Աստծո պատվիրաններին:

Մենք պետք է տարբերենք չարը բարուց, որպեսզի լիարժեք կիրառենք մեր կամքի ազատությունը:

Կամքի ազատություն ունենալու համար մենք պետք է օրենք ունենանք:

- Ի՞նչ եք սովորում Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին այն ճշմարտությունից, որ Նրանք յուրաքանչյուրին տալիս են բավարար գիտելիք չարի և բարու մասին, որպեսզի մարդիկ կարողանան իրենց ընտրությամբ լինել արդարակյաց, թե ամբարիշտ:
- Ի՞նչ տեղի կունենար, եթե չլինեին օրենքը կամ պատվիրանները:

Տարբերակ Գ. Ինչո՞ւ ենք հակադրություն զգում մեր բարի ընտրությունների նկատմամբ:

Կարդացեք 2 Նեփի 2.11, 16 հատվածները և փնտրեք լրացուցիչ ճշմարտություններ, որոնք Լեքին ուսուցանում էր կամքի ազատության մասին:

- Ի՞նչ գտաք:
- Ըստ ձեզ՝ Երկնային Հոր ծրագրում ինչո՞ւ է հակադրությունը կամքի ազատության անհրաժեշտ կողմ համարվում:
- Ի՞նչ ձևերով ենք մենք գայթակղվում՝ կատարելու ճիշտ կամ սխալ ընտրություններ:

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ ելույթը, որը կօգնի ձեզ հասկանալ այս ճշմարտությունը.

Աստծո նախաերկրային զավակները չէին կարող դառնալ նրա նման . . . մինչև նրանք չստանային . . . փորձառություն մի վայրում, որտեղ ներկա էին թե՛ բարին և թե՛ չարը: . . .

> . . . Մենք ուզում էինք ունենալ հնարավորություն . . . հակադրել բարին և չարը և լինել բավականաչափ ուժեղ՝ բարին ընտրելու համար (Ջեֆրի Ռ. Հոլլանդ, *Քրիստոսը և Նոր Ուխտը. Մորմոնի Գրքի Մեսիական Ուղերձը* [1997], 200, 204):

Մտածեք այն եղանակների մասին, որոնցով սովորում եք ընտրել բարին, նույնիսկ երբ գայթակղվում եք չարի կողմից: Ձեր մտքերը կարող եք գրել ձեր օրագրում: Կարող եք նաև խորհել այն եղանակների շուրջ, որոնցով կարող եք օգնություն փնտրել բոլոր այն որոշումների համար, որոնք հնարավոր է՝ ցանկանում եք փոխել:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD60013873_201_072-teacher_handout-1